

21.08.2020թ.

Հայտարարություն

Արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է ներքին մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է **ներքին մրցույթ՝ Արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության բազմակողմ միջազգային պայմանագրերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 14-30.11-Մ2-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության բազմակողմ միջազգային պայմանագրերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 14-30.11-Մ2-2) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկավարությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ կից:

https://www.mfa.am/filemanager/haytararutyunner/iravabanakan/pashtoni_andznagir.pdf

Արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության բազմակողմ միջազգային պայմանագրերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 14-30.11-Մ2-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Արտաքին գործերի նախարարություն (ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի օգոստոսի 21-ից

մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:00-ից 16:30-ը: Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 11:00-ին, Արտաքին գործերի նախարարության վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 10:30-ին, Արտաքին գործերի նախարարության վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212.309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- **Սահմանադրություն.** հոդվածներ՝ 2, 13, 14, 27, 28, 47, 68, 70, 88, 93, 102, 109, 110, 117, 124, 125, 127, 129, 147, 149, 153, 161, 192, 200, 201

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

- **Աշխատանքային օրենսգիրք.** հոդվածներ՝ 5, 8, 14, 124, 133, 139, 141, 156, 171, 219, 225
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143703>

- **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 4, 7, 8, 10, 15, 17, 19, 20, 21, 22, 38
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>

- **«Միջազգային պայմանագրերի մասին» օրենք.** հոդվածներ՝ 2-4, 8-10, 13, 15-17, 20, 24
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120816>

- **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք.** հոդվածներ՝ 2, 4, 6, 7, 11, 20
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142147>

- **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենք.** հոդվածներ՝ 3, 4, 7, 9, 10, 18
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143868>

- **«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք.** հոդվածներ՝ 2, 3, 5, 7
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138732>

- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք.

հոդվածներ՝ 5, 7, 22, 23

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141302>

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 12-ի «Արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման համակարգի մարմինների փոխգործակցության կարգը և գործադիր իշխանության մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ պաշտոնական հանդիպումների և բանակցությունների մասին ամփոփ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 1267-Ն որոշում. կետեր՝ 1, 22

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143136>

- Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 746-L որոշում. կետեր՝ 2, 3, 9, 12, 13, 15, 33, 35

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130414>

- «Համակարգչային օպերատորություն»: Ուսումնական ձեռնարկ: Անի Թորոսյան: Կրթության ազգային ինստիտուտ: Երևան 2017: էջեր՝ 11-13, 15-16, 19, 30, 76

հղումը՝ http://goriscollege.com/_ld/1/103_dDN.pdf

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70, 71, 74, 94, 99, 173, 221, 224, 227, 245-248, 250, 258

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝

<https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում» կոմպետենցիա, հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում» կոմպետենցիա, հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Արտաքին գործերի նախարարության անձնակազմի կառավարման վարչություն (հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2, հեռախոսահամար՝ 060-620-680, էլեկտրոնային փոստի հասցեն՝ m.hambardzumyan@mfa.am):